

ԱՐՄԵՆԱԿ

ԵՒ

ԱԲՐԱՅԱՍ

ԴՐԵՑ

Ս. Ս. Պ. Ա. < - Գ. Ի. Խ. Ե. Ա. Ն.

ՏՊԱՐԱՆ

«ԵՐԵՍԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» ի

ԵՒՔԱԿՈ

16 Օնթիս, 1917

9(47.925)

U-20



1 - ԱԲՐՈՀԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆ

2 - Արմենակ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

[A blue scribble is present here.]

26 JUL 2013

19944

5 OCT 2011

ԱՐՄԵՆԱԿ
ԵՀ
ԱԲՐԱՀԱՄ

Ա.


Իզմիր էլ Մարտ 14-ին, 1909:

Տեղի ունեցաւ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան առաջին հրապարակացին ժողովը:
Քաղաքի Ս. Ստեփաննոս եկեղեցու մէջ խոնուել էր ծովածաւալ բաղմութիւն. ներսը, դուրսը, բակի ամբողջ տարածութեան մէջ՝ ժողովրդական ալիքներ էին, որ ծփում էին: Միայն Հայերը չէին. կային բաղմաթիւ Յոլներ, Թուրքեր, Զրէաներ: Սրանք էլ մասմաթիւ Յոլներ, Թուրքեր, Զրէաներ: Սրանք էլ մասմաթիւ հետաքրքրութեամբ եկել էին լսելու՝ օրուան հրատապ խնդիրների մասին:

Այդ օրը խօսեցի եկեղեցու բարձրաշն ամրիոնից՝ մօտաւորապէս երեք ու կէս ժամ. վայր իջաչ՝ արիւն-քրտինքի մէջ կորած:

«Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն և Նորագոյն Թիւրքիա»: զա էր թէզը, բնաբանը:

Նկարագրել, վեր էի հանել թուրք ազգայնական քաղաքականութեան աւերիչ, բնաֆնջող ձգտումը դէպի բաղկացուցիչ բոլոր ազգութիւնները ընդհանրապէս եւ դէպի Հայ Ազգը՝ ժամանաւորապէս: Ներկայացրել էի այն բոլոր գործօնները, որ Համբակալութիւնը ձեռք էր տոել՝ այդ ծրագիրը յաջողեցնելու, նրան մարմին տալու:



4690-87

Արտացոլացրել էի այն բոլոր բնական, իրական
և պատմական տուիքները, որոնք հարկադրել էին
Հայ Ազգին լեզափոխական ուղին ընդգրկելու, եւ տը-
ւել պատճառը՝ Սօցիալ Դէմոկրատ Հնչակեան Կու-
սակցութեան ծնունդի եւ նրա ընդգրկած սկզբունք-
ների:

Հին Թիւրքիան դատապարտուած էր մեռնելու.
մենք էլ նրա գերեզմանափորներից մէկն էինք եղել:

Ասում էին, որ դալիս է, եկել է Նոր Թիւրքիա:

Արդ, այդ ասողները պիտի շարունակէ՞ին համի-
տականութեան գաղափարարանութիւնը, թէ՞ նոր,
բոլորովին տարրեր ուղի պիտի բռնէին:

Եթէ հին ուղին շարունակուէր՝ մենք էլ մեր
ուղին պիտի շարունակէինք, մէր ունեցած պալման-
ների համեմատ:

Դուրք ազգայնականութիւնը մարմնաւորով իտ-
տիհասը, իր սկզբունքներով եւ հաւատամքով՝ մեզ
լուս չէր ներշնչում. նա դրական երաշխիք, դրաւա-
կան չէր տալիս, որ ինքը կարող, ընդունակ պիտի
լինէր նորագոյն Թիւրքիա լառաջացնելու:

Նորագոյն Թիւրքիայի առաջին հիմնաքարը պիտի
լինէր՝ բաղկացուցիչ ազգութիւնների պատմա-ան-
հատականութիւնը ընդունել եւ ըստ այնմ պետական-
քաղաքական նորագոյն կառուցուածք լառաջ բերել.
ուրեմն եւ՝ նուածուող, ենթակալ ազգերի քաղաքա-
կան ինքնավարութիւնը անհրաժեշտորէն դառնում էր
էն առաջին անկինաքարը՝ նորագոյն Թիւրքիայի:

Ընդունակ էին Թիւրքիայի ղեկավարիչ դասա-
կարգը, նրա բախտն ու ճակատագիրը տնօրինող քա-
ղաքական ոլժերը, Տիրող Կուսակցութիւնը մի ալդ-
պիտի պատմական կոչում ստանձնելու եւ կեանքի
մէջ իրականացնելու՝ որքան կարելի է շուտ պիտի

անէ՞ին այդ. որովհետեւ Թիւրքիայի գուութեան շա-
րունակութեան միակ միջոցը այդ էր մնացել՝ վերա-
հաս կործանումից ազատուելու:

Ցայտնած էի իմ կասկածս, տարակուսանքս՝ հը-
րապարակի վրայ գործող թուրք քաղաքական հո-
սանքների պատկերը գծելով, եւ գրել էի մեր Կու-
սակցութեան ծրագրի՝ քաղաքական, տնտեսական,
ազգային գաղափարաբանութիւնը:

Բ.

Ամբիոնից վայր իջաւ. շրջապատուեցայ ունկըն-
դիրներից : Հայ, Թուրք, Յուն, Հրէա, անխտիր, գո-
հունակութիւն եւ համակութիւն լայտնեցին, խընդ-
րելով՝ որ այդ ուղղութեամբ լաճախի խօսուի :

Մօնեցաւ բազմութեան միջից եւ մի հայ կին, իր
փոքրահասակ երեխայի ձեռքից բռնած : Նա՝ իր շքեղ
հազուստով, իր շարժուձեւերով, եւրոպական ամե-
նարարձր դահլիճների մէջ իսկ՝ կարող էր ուշադրու-
թիւն դրաւել:

Իր լորգած զգացմունքները հազիւ զսուելով՝ ա-
սաց. «Այսօր, աւելի քան հպարտ եմ հայուհի լինե-
լուս համար. ինդրում եմ՝ ձեռքդ այս գաւակիս գըլ-
խին դնես եւ նրան օրհնես . . .» :

Ասացի մի քանի խրախուսական խօսքեր տիկնո-
ջը եւ իր գաւակին :

Մօնեցան, ապա, քաղաքի առաջին հարուստնե-
րը. նրանք, որ առաջ յեղափոխականների անունը լր-
սելիս՝ փախչում, անիծում էին. նրանց համարելով
ազգային բոլոր աղէտների միակ պատասխանատու-
ները:

Արանք էլ լայտնեցին իրենց չնորհակալութիւնը,

«Երջանկութիւնը», ինչպէս իրենք արտաշատուեցան, ինդիբների այդ կերպ վերլուծման եւ եզրակացութեան համար:

Վերջը՝ դրանցից երկուսը միաժամանակ առաջարկեցին, որ ճաշին իրենց երթամ:

Միտքս շինթուած էր ։ յուղուած՝ դլուխս կորցրածի պէս էի:

Հէնց դրա համար՝ երկուսին էլ «լաւ» ասացի: Եկաւ գործադրութեան, բաժանման բոպէն ։ ուրին պէտք էր երթալ:

Հրաւիրողներից երկուսն էլ հաւասար ոյժով պնդում էին: Ես առաջարկեցի, որ իրենք համաձայնեն իրարու միջեւ. վիճարանութիւնը շարունակում էր:

Բայց իմ հոգին այդ ժամանակ աւելի քան ալենոծումի, ծփանքի մէջ էր ։ ուղղակի լալս էր դալիս: Անդադար աջու ու ձախ էի նայում:

Այսու ունկնդիր ունիմ ահազին բազմութիւն. Հարիւրաւորներ են, որ դալիս՝ ձեռքս են սեղմում: Սրանք իմ արիւնակիցներս, իմ սիրելիներս են՝ որպէս հայ, որպէս ժողովուրդ: Բայց ո՞ւր է դաղավիառը, ո՞ւր՝ ընկերը: Զը կար ։ չէր երեւում ընկերը. մէջտեղ չէր դալիս ընդհանրական սկզբունքների այն ժակից, դործակից մասնիկը, որ ասում է ընկեր: Ո՞ւր են մնացել ընկերներս. չը կա՞ն նրանք. եթէ իան, եւ գիտեմ որ կան, ապա ինչո՞ւ չեն երեւում. Շրանց խօսքը, նրանց ձեռքի հպումը բացակաչ է. ուրեմն եւ մի բան զգալի կերպով պակաս է:

Հէնց դրա համար էլ՝ ընկերների բացակացութիւնը, նրանց չերեւիլ ինձ դրել էր հողեկան ընկուած վիճակի մէջ: Աչքերս անդադար այս ու այն էողմն էի դարձում եւ ինձ հրաւիրող մէծահարուստ

Աւեանի եւ Տւեանի փոխաղարձ վիճարանութիւնը, նրանց ինձ ուղղած նախադասութիւնները դրեթէ չէի լուսում. որովհետեւ յաճախ երկուսի խօսքին էլ «լաւ» էի ասում, հաւանութիւն տալիս, թէեւ իրարու հակասող, առանց լսելու թէ իսկապէս ի'նչ է ասում:

Մեղ մօտեցան երեք ուրիշ հոգի էլ՝ թիկնեղ, կայտառ, բաց տարիքները առած, համեստօրէն հավանուած՝ աւելի հյայտանիցիներ, քան տեղացիներ: Սրանք ո՞չ շատ սահուն հայերէնով՝ վիճող պարոններին դասուալով՝ ասացին. «Եֆէնդին շատ գովեց շայաստանը եւ Հայ ժողովուրդը. մենք էլ Հայաստանցիներից ենք, Հայաստանի էլ կերակուր ունենք. թող հարցնենք՝ ո՞րն է ուղում ընտրել՝ Հայաստանինը, թէ՞ եւրոպականը: Դուք հարուստ. մենք՝ աղքատ. տեսնենք ձե՞զ նախընտրութիւն կը տաչ, թէ՞ մեզ»:

Ազեւս ճանապարհս գծուած էր. հրաւիրող հարուստ բարեկամներիցս ներողութիւն ինդիբեցի. խոստանալով մի ուրիշ օր իրենց հրաւէրքը ընդունել: ուրոցի հետեւիլ «Հայաստանցիներ»ին, որոնք այնքամն նրբամտութեամբ սրտիս թելերին էին դարկել, որ անկարելի էր ինձ համար՝ իրենց առաջարկին նախընտրութիւն չը տալ:

Ճանապարհին գնում ենք. հրաւիրող «Հայաստանցիներս ուրախ են, կատարեալ ցնծութեան մէջ, մի առանձին սիդաճեմ քայլուածք են առել, եւ հըպա՞րտ հպա՞րտ առաջ են դնում, ես էլ իստեւներից՝ ընկեր Զանդիւլեանի հետ միասին:

Բայց դեռ հանդստացած չէի. մտքովս որոնում

էի ընկերներիս, եւ մի առանձին՝ սրտնեղութեամբ լցուած՝ ասացի ընկեր Զանդիւլեանին. «Այս երկու օր է՝ ալստեղ ես. չը հարցնէ՞իր, չը վնասուէ՞իր, չը գըտնէ՞իր. ի՞նչ եղան. ո՞ւր են. ո՞ւր մնացին։ Եթէ մեռած, կորած են՝ ո՞ւր են գերեզմանները»։

Խեղճ ընկեր Զանդիւլեանը՝ տեսնելով լուսումս, իր բնաւորութեան հակառակ, սկսեց շատ մեղմ կերպով պատասխանել. «Ի՞նչ անեմ. շատ շատերին էլ հարցրի. ասացի թէ ալստեղ Սոցիալ-Դէմոկրատ Հընչակեաններ չը կա՞ն. ամէնքն էլ ասացին, որ կան։ Բայց ո՞վ, ո՞րտեղ լինելնին՝ ո՞չ ոք չը կարողացաւ ասել։ Այսօր էլ հարապարակացին ժողով կար՝ հարկաւ լսեցին գալիք, ո՞րտեղ որ է, կարող է պատահել, որ մէջտեղ գան. ուրիշ ի՞նչ կարող ենք անել. բարկանալով ի՞նչ կը լինի…»։

Ուղեկից Հայաստանցիներս ականջները ցցած՝ ուշի ուշով լսում էին մեր առանձին խօսակցութիւնը։

Տատանում էի. մտածում էի սրանցից հարցնել, թէ արդեօք ալստեղ Սոցիալ-Դէմոկրատ Հնչակեանների ճանաչում են։ Հարցնե՞մ՝ թէ՞ չը հարցնեմ։ Դժուարս գալիս էր հարցնելու, որովհետեւ կարող էին մտածել, որ Կեդրոնի անդամ է եւ չի ճանաչում իր ընկերներին. որով մի տեսակ վարկարեկութիւն կը լինէր։

Բայց չէ՞ որ տարիներ շարունակ, այստեղ, մեր կուսակցութիւնը գործել է. չէ՞ որ հարիւրաւոր նամակներ ես ինքս ևմ գրել. չէ՞ որ Պարիզից մեկնելուց առաջ՝ իրենց իմացրի գալս, ասել էի, մինչեւ անդամ, որ քարափ գան՝ ինձ դիմաւորեն. որովհետեւ տեղական պայմանների հետ ծանօթ չէի, բայց ո՞չ ոք չէր եկել. թէ՛ւ Մասնաճիւղի մի օտար փոստատան հասցէն ունէի, այն հասցէն՝ որով շարունակ

Թղթակցում էինք։

Այլեւս անկարող լինելով ինձ զսպելու, հրաւիրողներիս դիմեցի. «Ասացէք, խնդրեմ, դուք որ Հայաստանցիներ էք, ալստեղ սօցիալ դէմոկրատ ո՞ր Հնչակեանին էք անձամբ ճանաչում, ապա՝ ասէք՝ տեսնեմ. օրինակ Դարակին ճանաչո՞ւմ էք. նրա հետ ծանօթութիւն ունի՞ք...»։

Հայաստանցիներս իրարու երես նայեցին. վոխաղարձ ակնարկներ վոխանակեցին եւ մէջերնից ամենից տարէցը ասաց. «Էֆէնդի, մենք Հայաստանցիներ ենք. դարակ՝ մենք պատի մէջ փորուած այն վոս տեղին ենք ասում, որի մէջ, սովորաբար, զանազան իրեղէններ ենք պահում։ Դարակը մարդու անուն չէ։ Այս՝ լսել ենք, դիտենք, որ Սոցիալ-Դէմոկրատ Հնչակեաններ կան. երեւի մի օր կերեւան, կը գան ձեզ կը գտնեն. հիմակ ու հիմայ տուն երթանք՝ հացերնիս ուտենք»։

Այս է՛լ աւելի շփոթեցրեց ինձ. որովհետեւ կասկածու արդարացաւ. սրանք իրաւունք ունէին ասելու, որ իմ ընկերներիս չէին ճանաչում...։

Դ.

Տուն գնացինք. հայկական ճոխ սեղան. հայկական կերակուրներ՝ ամէն տեսակի։ Կերանք, խմեցինք, վերջացրինք։ Հիւրընկալներս մի առանձին ուրախութեան մէջ էին, բարձր տրամադրութեամբ, զուարթ, ծիծուն։ Մէջերնին տիսուրը մինակ ես էի։

Ճաշից յետոյ՝ աչքս ընկաւ օջախի գլխին՝ մեծ հայելու տակ գրուած Գրէին արծաթապատ կազմով, խաչուած Քրիստոսը վրան, ոսկեզօծ եղբերով, մագաղաթանման թերթերով. եւ այդ բոլորը փաթաթ-

— 12 —

ուած մետաքսեաչ թաշկինակների մէջ :

— Այս ի՞նչ է, հարցըի :

— «Սա մեր Աւետարանն է. ճաշից լեռոյ մենք սովորութիւն ունինք Աւետարան կարդալու. կուզէ-ի՞ք տեսնել» :

Հետաքրքրուեցաչ. ձեռքս առաջ : Արդարեւ, գեղեցիկ դրերով գրուած մի ձեռագիր Աւետարան՝ նըկարներով զարդարուն : Նայեցի, իրենց տուեցի :

— «Զէ՞իք ուզիլ, որ բանամ եւ մի քանի դլուխ կարդանք». ասաց ամենից տարէց ալեհերը :

— Բացէ՛ք, կարդացէ՛ք, ասացի, ձեր սովորութեան համեմատ :

Կալոտառ ծերունին ողեւորութեան հասնող՝ մի մասնաւոր ուրախութեամբ ձեռքն առաւ, փառահեղ կազմի մի տեղից սեղմեց եւ թերթերի ու կազմի միշից դուրս թափուեցան Կեդրոնից գրուած՝ ուզարկուած բոլոր հին ու նոր նամակները, մասնաճիւղի կնիքով միասին :

Երբ բերանս բաց մնացած՝ դիտում էի, խօսակիցս աւելացրեց. «Այս էլ քո ձեռքով գրուած նամակները» :

Ավելս պարզ էր. գտնուում էի ընկերներիս մէջ. ուրախութիւնս անսահման էր. ընկեր Զանդիւեանը սկսեց բարձրածայն խնդալ եւ ձեռքերը իրարու. զարկել . . . : Ու սկսեցին նորից խմել. բայց այս անդամ կուսակցութեան կենացը :

«Դարա՞կ, ընկեր Սապահ-Գիւլեան, դարա՞կ, ահա քեզ ԴԱՐԱԿԻ. հիմայ ճանչցա՞ր ԴԱՐԱԿԻ . . . »:

Հնկերները ծիծաղում, հրճում էին, որ ինձ այդ կերպ յանկարձակիի էին բերած :

Ասացին. «Սուլթան Համիդի բոնապետութեան ամբողջ շրջանին՝ այս «Դարակը» ալստեղ էր. մի

քանի անգամ այս տուզարկութեան է ենթարկուել եւ սակացն Դարակ-Աւետարանը մեղ վրկել է, միշտ էլ մնացել է դարակ, վրան քող քաշուած՝ աչքերից հեռու, դրսից եկողներին անծանօթ, անմատչելի. եւ մի՞թէ Հայաստանում դարակները դրա համար չեն շինում . . . »:

Միս, աչժմս ո՞ւր էք, իմ քաղցրիկ, իմ անգուգական ընկերներ. լեռներո՞ւմ, բանտեցի՞ մէջ, թէ՞ գերեզմաններում :

Բայց ո՞ւր էլ, որ լինիք, վստահ եմ, հաւատքը ունեմ, որ դուք վրկել էք ձեր Ս. Դրօշը, անաղարտ էք պահել նրա ծալքերը եւ մնացել էք դարակներ. ցաւի, չոյսի, գաղափարի, կենսատու սկզբունքների դարակներ :

Ե.

Այսո՛, այդ անմոռաց օրն էր, մեր այդ ուրախութեան սեղանին էր; երբ ներս մտաւ մի կին, 45-ի մօտ, նազլը անունով:

«Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան ընկերուհիներից մէկը», ասաց ընկեր Ա. — «աղան» :

Նազլըն մի հաստակազմ, բարձրահասակ, կաշմըմբոււ, լիքը երեսով, վերին շրթունքը մաղերով ծածկուած՝ համարձակախօս, խրոխտ, անվեհեր կերպարանքով մի կին էր :

Իր առաջին հարցը եղաւ. «Արրահամիս ճանչցա՞ր, տեսա՞ր, ի՞նչպէս է, քո նկարագրած ընկերների պէս է»:

— Ո՞ր Արրահամին, հարցըի:

— «Արրահամ Մուրատեանին»:

Ցիշեցի. Արրահամին տեսել էի կ. Պոլիս, դեռ

1908-ին :

Պոլիս՝ Արբահամը պարապում էր կօշկակարութեամբ. լուսկեաց, համեստ՝ բաց կրակու մի ընկըր էր, ինքն իր մէջ ամփոփուած՝ հասարակական ցաւերի բեռը սրտի վրայ: Շարունակ գալիս էր «Ենի-թան»ի մեր գրասենեակը, հարցնում թէ իրեն համար անելիք ի՞նչ կար:

Զափազանց աշխատասէր լինելով՝ իր վոքրիկ խնայողութիւններից առատ րաժին էր հանում կուսակցական գործերին. իր կուսակցասիրութիւնը հասնում էր կուսակցամոլութեան, մոլեսանդութեան:

Բաց այդ չէր միայն Արբահամին բնորոշող զիծը. նա միշտ հարց էր դնում՝ «Ի՞նչ անել»:

Այդ այն օրերն էին, երբ Հայաստանից մասնակի սպանութիւնների լուրը շարունակ գալիս էր եւ կըռուղի ընկերներին դնում էր լուրզումնալից, անտանելի մի դրութեան մէջ:

«Ոմքեր կազմել, երկիր երթալ, այդ չարագործներին պատժել. ինչո՞ւ կուսակցութիւնը այդ ուղղութեամբ չի ուղղում գործել. ինչո՞ւ իրեն թուլ չեն տալիս, որ խմբեր կազմի»: Նրա աղաչանքը, խնդիրքը շարունակ այդ կէտի շուրջն էր գառնում: Եւ ի՞նչ պիսի թախծալից, հետապնդող չեշտով՝ աղաչում, պազատում էր, որ այդ միստիան իրեն տրուէր, իրեն եւ իր ընկերներին, որոնք պատրաստ, առաջին հաշանգին էին սպասում:

Անկարելի, դժուար էր լինում, այդ ժամանակ, կոռուպ ընկերներին զապել: Արբահամը, մանաւանդ, այդ ուղղութեամբ եւ ոգուով աշխատել ուզող ընկերների մէջ՝ առաջին տեղն էր բռնում: Նա շարունակ տեսնելիս, գալիս՝ ա'յդ էր ուղում. «Հայաստան

երթալ. պատժող խմբեր կազմել»:

Բաց ո՞վ, ի՞նչ էր Արբահամը, ի՞նչպէս էր նրա հոգին կազմուել, ի՞նչ միջավայրի ծնունդ, արտադրութիւն էր նա:

Նա իզմիրի «Զայ» թաղեցի էր, ծնուած 1886-ին. իր մանկութիւնը անց էր կացրել քաղաքի մէջ. ըսկըզնական ուսումը առել էր տեղուցն Մեսրովիեան վարժարանում: Ազգաս ծնողաց զաւակ լինելով՝ աշկերտութեան էր մտել եւ կօշկակարութիւն սովորել. մէծացել էր որբ, հացը մեռել էր, երբ ինքը գեռ 8 տարեկան երեխալ էր:

Նազլըն հայրական պարտականութիւնն էլ իր վըրան էր առել. բաց առանց ծանրանալու հաւ հասարակութեան եւ գրկեց-բարեկամների վրայ:

Վերին աստիճանի աշխատասէր, իր արժանապատութիւնը ձանչող, լարգող կին լինելով՝ իր երկու որբերին մէծացնում է իր սեպհական աշխատանքով՝ լուացք անելով, տուն մաքրելով, կարկատան անելով: Ստեղծագործող աշխատանքը իրեն միջոց անելով՝ իր երեխաներին պահում, մէծացնում է՝ առանց որ եւ է կարօտութեան մէջ թողնելու նըրանց:

Արբահամի բնաւորութեան վրայ նախ ազլել էր մայրը՝ Նազլըն, իր ուժեղ, առնացի նկարագրով:

Ի՞նչ բարուական խրաներ էր տուել Արբահամին:

«Ծեծի՛ր, մի՛ ծեծուիր. զա՛րկ, մի՛ զարկուիր. վախեցրո՛ւ, մի՛ վախեցիր. աշխատի՛ր. գլուխ մի՛ ծոփ»:

Բազմալեզու իզմիրի մէջ գլուխ պահելու համար՝ այդ յատկութիւնները անհրաժեշտ էին: Եւ նրա հո-

զին, մօրը կաթի հետ, այդ ուղղութեամբ էր սնըն-
գուել, կազմակերպուել:

Մնացածը լրացրել էր Սօցիալ Դէմօկրատ Հըն-
չակեան գրականութիւնը:

Իր պարապոչ ժամերին՝ «Հնչակ»ի հաւաքածուն
ձեռքից բաց չէր թողնիլ: «Երիտասարդ Թիւրքիա»,
«Սօցիալիզմ եւ Հայրենիք», «Սահմանադրութեան է-
ռթեան մասին», իր գրպանից անանջատ՝ սիրած
գրքերն էին: Բնթեցասէր էր ծայր աստիճան: Հը-
հասկացածը գիտցող ընկերներից խնդրում էր բա-
ցաւրել:

Ու այդպիսով կազմուեցաւ, լառաջ եկաւ նետ-
ուող բնաւորութեան տէր, «կրակից չը վախեցող»,
խոհուն, երազուն, լուսկեաց, հաստատ և անդրդուելի
կամքի տէր Արրահամը, որ ամէն խօսքին ասում էր՝
«Սիրտս չի դիմանում»:

Կուսակցական ներքին ժողովներից երրէք բա-
ցակաչ չէր մինիւ: օգնութեան կարօտ ընկերների ա-
ռաջ իր քամիկը բաց էր. «Աղքատ եմ մեծացել. գի-
տամ թէ աղքատութիւն ի՞նչ է»: Եւ առատութեամբ
բաժին էր հանում ազգային բոլոր դործերին ու բարե-
նակատակ հաստատութիւններին:

Ամուրի էր, բաց հայկական մաքուր բարոյակա-
նի տէր: գեռ մի օր տեսնող չի եղել, որ Արրահամը
խմէր, թափէր, երիտասարդական անզգուց քայլերի
անձնատուր լինէր:

Արրահամին այդպէս էի ճանաչել:

Զ.

1913ի աշնան վերջին օրերը՝ «Հէլուան» շոգենաւը
Աղէքսանդրիակի նաւահանգստին մօտենալու վրայ

էր:

Քարափի վրայ խոնուել էր ահապին բազմու-
թիւն՝ ամէն ազգերից:

Տրիեստից՝ նախապէս հեռազրել էլ եղեապոսի
ընկերներին գալս:


Դեռ հազիւ շոգենաւը կայան առած՝ սանդուխ-
ները ձգած, բազմութեան մ'լից՝ ձեղքեց, վեր բարձ-
րացաւ ընկեր Համբարձում Գրիգորեանը, իր հետն
ունենալով Արքահամին:

Դեռ չը բարեւած իսկ, ընկեր Համբարձումը իր
դաշն ձախով ասաց. «Ընկեր Սապահ-Գիւլեան, գու
մեր մեծն ես, Կեղրոնի անդամ ես, մեր աչքի լոյսը,
մեր յարդանքի առարկան. բայց այս բոպէիս գու մի
հասարակ սօցիալ դէմօկրատ հնչակեան ես, ուրիշ
ոչինչ, եւ գտնուում ես իմ բացարձակ հրամանիս
տակ, որպէս զինուորապետի. ուստի քեզ արգիլում
եմ զուրս դալ, մէկի հետ տեսակցիւ, խօսիլ՝ մինչեւ
որ ես վերապառնամ: Դու այստեղ՝ սենեակիդ մէջ
պիտի նստես, սպասես, Արքահամը էլ քո պահապանն
է, որին պիտի ենթարկնես՝ տուածս պատուէրներին
համաձան: »

Զարմացած մնացի. բացատրութիւն ուզեցի: Ո՛չ
մի խօսք, ո՛չ մի բառ:

Ընկեր Համբարձումը յետ վերադարձաւ՝ դէպէ
քաղաք: Արքահամին ինչքան հարցրի այս արտաքոչ
կարգի վարմունքի պատճառը, դարձեալ ոչինչ չա-
սաց, միայն աւելացրեց, որ «ինտու կիմանաս»:

Բոլոր ճանապարհորդները զուրս դալուց յետով՝
ընկեր Համբարձումը նորից յետ եկաւ, հետն ունենա-
լով մի քանի ուրիշ ընկերներ էլ: Առան պայտսակ-



ներս եւ ինձ շրջապատելով՝ դուրս հանեցին, կառք
նստացրին եւ շրջապատած՝ պանդոկ տարան:

Կենդիրը պարզուեց :

Ռումանիակից Տրիեստի վրայով Եգիպտոս գա-
լուս լուրը Եասեանը իմաց էր տուել Պօլիս. Աղօմի
Բէցը եկել եւ «Սալօւա» պանդոկի մէջ իջնելով՝ ծրա-
գրել էին մի-դժոխացին գաւադրութիւն իմ կեանքիս
դէմ:

Եասեանի կատարած գաւաճանական դործերը
ժամանել էին Եղել ընկերներին: Ուստի զգու-
շական ամէն միջոցներ ձեռք էին առել:

Անցան օրեր. ամէն ինչ հաստատուեցաւ: «Նրա
տերը լուս ես պիտի լինիմ. նրա արեւը ես պիտի մա-
րեմ. նրա գաւաճանական հոգին հանողը ե՛ս պիտի
լինիմ... Դա ալեւս իմ դործն է. հրաման տուր»,
առում, աղաջում, պազառում էր Արքահամը:

Է.

Այդ օրերը եկաւ եւ ընկեր Արմենակ Համբար-
ձումեանը:

Արտաքուստ անուշ, քաղցր բնաւորութեան տէր.
Քայց ներքուստ փոթորկալից մէկը. առիւծափրտ մի
Երիտասարդ, իզմիրի Նազիլի գիւղից:

Արմենակը կրակի հետ խաղացող, կրակով մե-
ծացած մի տղամարդ էր. անվեհեր, կտրիճ, հրաշա-
լի հրացանաձիգ, իր գնդակը պարասը չէր երթալ.
ամենափրդ թիրախին անվրէպ զարկում էր:

Ինքնուս կերպով՝ ոմբագործութիւնը իր սիրելի
արհեստն էր զարձրել:

Չինուորական տարիքի մէջ լինելով՝ երբ իրեն
էլ զինուորագրել էին, թողել՝ անցել էր արտասահ-

ման:

Ի բնէ ըմբոստ, թրքատեաց ողի ունենալով՝ նա
չէր կարողացել հաշտուել այն գաղափարի հետ, որ
ինքը իր ուժը ի սպաս պիտի դնէր թուրք պետու-
թեան:

Իզմիրի շրջանի մէջ՝ մի քանի չարագործ թուր-
քեր գլորել էր. չէին կարողացել ապացուցանել. բայց
իր մասին որոշ կասկածներ էին չղացել, ուստի դրա
համար էլ հետապնդուած էր:

Արմենակը անցնում է Յունաստան, Աթէնք, ա-
պա՝ Կրետէ: Այց տեղ իր լոյն ընկերների հետ որո-
շում է վերջ գնել Սամոսի կղզու կուսակալի կեան-
քին՝ լոյն Կրիտարիսի, որ գաւաճանական դիրքի մէջ
էր գտնեսում, եւ թուրք իտափհատական կառավա-
րութեան ձևու հնագանդ՝ կամակատար գործիքն էր
դարձել: Նրա շահատակութիւնները ցնցել, իր դէմ
էր հանել Յոյն բոլոր ժողովրդին:

Փնտուսում էր պատժող ձեռքը:

Այդ պատիւը վիճակում է Արմենակին:

Կուսակալը իր չքախմբով անցած ժամանակին՝
հնուոն՝ ժայռի տակը թագնուած Արմենակի գնդա-
կը նրան վայր է գլորում, հետեւրզները փախչում
են. մի քանի ժամ թշուառականի դիակը բացօղեալ
մալուց յետոյ՝ արիւնաթաթախ տուն են տանում եւ
անտեղ իր անմաքուր հոգին տալիս. նա զարկուած
էր կուրծքից:

Հինգ դրա համար Արմենակը Յոյների պաշտելին
էր, եւ Աթէնքի մէջ նա իր տանն էր:

Է.

Գործ կար:

Արմենակը եկաւ Եգիպտոս, Աղէքսանդրիա . այն-
տեղ ճանչցաւ իրեն, իր պայծառ, մաքուր հոգւով, իր
արիական տղամարդութեամբ :

Անցան ամիսներ :

Պատրաստում էր Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան
Կուսակցութեան վերջին ապստամբական, յեղափո-
խական գործը :

Քէսուէնջէի Ընդհանուր Պատգամաւորական ժո-
ղովի որոշումները՝ իրենց բոլոր մասերով՝ պէտք
է գործադրուէին, մարմին առնէին :

Թ.

Պարիզից, 1914-ին, ընկեր Փարամազի հետ վե-
րադարձանք Եգիպտոս :

Գիշեր էր . Փարամազը պառկել էր :

Սենեակս մտան Արրահամը եւ Արմենակը :

Այդ գիշերը նրանց ուրախութեան հարսանիքն
էր . կատարում էր իրենց ցանկութիւնը : Հարկաւոր
էր երկիր մտնել :

Բացատրեցի գործունէութեան, անելիքի բոլոր
մասերը . տուեցին իրենց կրկնակի երգումը :

Փարամազը արթնցաւ . ժպտաց, ասաց, որ դեռ
կիսատ շատ բան կայ . պէտք է շարունակութիւնը
թողնել վաղուան :

Հետեւեալ օրը, երեկոյեան, հաւաքուեցանք Ա-
ղէքսանդրիու ծեվեղեաչ սրճարաններից մէկը :

Փարամազը առաւ իր ձեռքին մատիտը եւ մէ-
կիկ-մէկիկ սկսեց գծեր քաշել, պատկերներ կազմել:
Խօսեց, բացատրեց, մեկնարանեց, նորից անդրա-
դարձաւ, Գործի ընդարձակութեան մասունքների մէ-
ջը մտաւ :

Գօլիցինի տերրութական գործը կազմակերպողը
իր գերի մէջն էր . ստեղծել էր տաք, յեղափոխական,
բորբոքիչ մի մթնոլորտ :

Ժ.

Շողենաւը պատրաստում էր մեկնելու :

Փարամազի հետ մենք կանգնած էինք հեռու,
շատ հեռու :

Ընկեր Համբարձումը՝ հետն առած Արրահամին
եւ Արմենակին չողենաւ մտան :

Մեկնողների վրայ նշմարում էր մի աննկարա-
գրելի ոգեւորութիւն . ոգեւորութիւն, որի էութիւնը
կարող է հասկանալ միայն նահատակուելու պատ-
րաստ անձնազնի մարտիկը :

Արմենակը եւ Արրահամը գնացին Աթէնք : Ստա-
ցաւ իրենց նամակը եւ լուսանկարները :

Յոյն նաւազարների միջոցով՝ իրենց բոլոր գոր-
ծիքներով՝ անցել էին իղմիր . այնտեղից էլ ուրա-
խութեան գիրը ստացաւ :

Պօլսից ստացաւ վերջին նամակը, որով հաղոր-
դում էին թէ ցանցը տարածուել է :

Եւ այսուհետեւ, Պարիզ, լսեցի իրենց ձերբա-
կալման բօթը :

Ու մնացածը պատմութեան գործն է :

ԺԱ.

Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը
նորից իր ճիգը, իր աղաղակն էր արձակել, իր աղ-
դանչանն էր տուել :

Բայց այս անգամ կախաղաններով, մարտական

գործերով:

Ու կախաղաններից մեր սուրբերի, մեր նահատակների մարմինները ճօճացին՝ Կ. Պօլում, Ադաբազարում, Կեսարիայում, Ամասիայում, Սեբաստիայում, ...

Դրանք նախաղուռն էին ապստամբական, լեզվովական այն մէծ Գործի, որ անուհետեւ պարզուեց ամբողջ մարդկութեան առաջ:

Դրանք նախակարապետներն էին Սուէտիայի, Վանի, Շատին Գարահիսարի, Եղեսիու այն անմահ հերոսութիւնների, որով Հայ Ազգը միշտ ճակատը բարձր կարող է կանգնել Ազատութեան համար պայքարող՝ մարդկութեան առաջ:

«Մահ իմացեալ՝ անմահութիւն է», ասել, նուադել, երդել էր Եղիչն:

«Հայը պիտի մեռնի, որ Հայը ապրի», ասել էր Փարամազը:

Եւ արդարեւ, Հայը մեռաւ, Հայն էլ ազատուեց։
Պատմութեան օրէնքը կատարուեց։

Ազատագրութեան սգին իր զոհերը առաւ։

Ա Ե Բ Զ

Ս Ա Պ Ա Հ -Գ Ի Խ Լ Ե Ա Ն Ի

ԵՐԿԱԾԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o<<—‡—>>o—

- 1.— ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՅ
- 2.— ԳՈՐԾԱԽՈՐ ԴԱՍՍԿԱՐԳԸ.
- 3.— ԿԱՊԻՏԱԼԻՍ ԴԱՍՍԿԱՐԳԸ.
- 4.— ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ. Պրակ Ա.
- 5.— ԵՐԻՑԱՍՍՐՈՒԹԻՒՆԻՑ ԹԻՒՐԲԻԱ.
- 6.— ՀԱՐՑԱՐԱՆ (Հողային).
- 7.— ՀԵՐԴԵՐ ԵՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՅԵԱՑԲՆԵՐԸ.
- 8.— ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ.
- 9.— ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ Պրակ Բ.
- 10.— ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒԵՐԸ.
- 11.— ԱՐՄԵՆԱԿ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ.

—»—

—o<<—‡—>>o—

—»—

Հայաստանի Ազգային գրադարան



NL0421282

19944